ՅՈՒՆԻԲԱՆԿ | ԲԱՆԿ ԵՎ **ԱՎԵԼԻՆ**

Հայտարարություն

Ընդհանուր տեղեկություններ	
Թողարկողը և տեղաբաշխողը	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ
Արժեթղթերի դասը	Անվանական, արժեկտրոնային, պարտատոմս
Արժեթղթերի ձևը	Ոչ փաստաթղթային
Մեկ արժեթղթերի անվանական արժեքը	100 ԱՄՆ դոլար
Արժեթղթերի քանակը	30,000 հատ
Թողարկման ընդհանուր ծավալ	3,000,000 ԱՄՆ դոլար
Պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային տոկոսադրույք	**6%**
Արժեկտրոնի վճարման պարբերականությունը	Եռամսյակային վճարման պարբերականություն
Շրջանառության ժամկետ	36 ամիս
Երկրորդային շուկա	Հայաստանի Ֆոնդային Բորսա ԲԲԸ
Թողարկման ամսաթիվ	29.09.2026թ.
Տեղաբաշխման ժամկետ	29.09.2026թ. – 04.12.2026թ.
Արժեկտրոնային պարտատոմսերը կարող եք ձեռքբերել «Յունիբանկ» ԲԲԸ-ի գլխամասային գրասենյակում կամ մասնաճյուղերում, իսկ տեղաբաշխման ավարտից հետո (ցուցակումից հետո) դրանք շրջանառվելու են կարգավորվող շուկայում՝ մասնավորապես Հայաստանի Ֆոնդային Բորսա ԲԲԸ առևտրային հարթակում:	
Արժեկտրոնային պարտատոմսերը ձեռքբերելու համար անհրաժեշտ է արժեթղթերի և բանկային հաշիվներ բացել, համապատասխանաբար «Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ –ում և «Յունիբանկ» ԲԲԸ-ում: «Յունիբանկը» հանդիսանում է Հաշվի օպերատոր, հետևաբար բոլոր հաշիվները հնարավոր կլինի բացել հենց բանկում:	
«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, բանկի կողմից թողարկված անվանական պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ և երաշխավորված են «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից:	
Պարտատոմսերի մարման ամսաթիվը	29.09.2029թ

Ծանուցում «Յունիբանկ» ԲԲԸ թողարկման պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտների վճարումը և պարտատոմսերի մարումը կիրականացվի հետևյալ ժամանակացույցով.

29.12.2026թ, 29.03.2027թ, 29.06.2027թ, 29.09.2027թ,
29.12.2027թ, 29.03.2028թ, 29.06.2028թ, 29.09.2028թ,
29.12.2028թ, 29.03.2029թ, 29.06.2029թ, 29.09.2029թ:

Արժեկտրոնի վճարումները կատարվում են արժեկտրոնի հաշվարկման օրերին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ արժեկտրոնի հաշվարկման օրը ոչ աշխատանքային օր է. նման դեպքում արժեկտրոնը վճարվում է արժեկտրոնի հաշվարկման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:
Արժեկտրոնային եկամտի, ինչպես նաև մարման գումարը վճարվում է վճարման նախորդ աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ կազմված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա «Յունիբանկ» ԲԲԸ-ում՝ պարտատոմսերի անվանական արժեքին հավասար գումարները ներդրողների բանկային համապատասխան հաշիվներին փոխանցելու միջոցով: